Միսաք Մեծարենց

Ցայգանկար

Համատարած անդորրության մը մեջեն,
կիսաթափանց մըշուշներուն մեջ հալած
ուրվագիծը տուներու՝
որոնց լայնաքթիք պատուհաններեն
կը ժայթքեն
լույսի ցայտքեր՝ տարփագին ծաղիկներուն պըլլըված:
Ու հեշտոտ ու մարմըրուն
աղաղակն ալ նըվագներուն լարավոր
կը ծաղկեցընեն դյութանքն անդորրիկ,
գիշերվան մը երջանիկ:
Ու կ’երկարի՛, կ’երկարի՛
խմբանկարը տուներուն՝
տարտամորեն փաթթըված
մեջն ապրշում մըշուշին,
ու լայննալո՛վ, լայննալո՛վ
դեպի ծովափն՝ ու երկչոտ
կը սպասե
ալիքներու համբույրին:
Ու եզերքեն հանդիպակաց,
ծայրը դալար հրվանդանին,
ուր վաղուց
մեռան ճիչերը ցորեկին,
ծովին փոթ փոթ երանգածուփ թավիշին վրա

միապաղաղ կ’անդրադառնա
ուրվանըկարը խուսափուկ
լույսի ծրփուն ծաղիկին՝
որ կը ծրլի փողփողուն ծովեզերքի փարոսեն:
Ու դեռ հեռուն,
քաղաքեն ու բացավայրեն ալ անդին,
կ’ընդնշմարեմ արտևանները ցրցուն,
մանիշակե լեռներուն
մարմաշի մեջ պլլրված
հսկա հարսեր հեշտամոլ՝
որոնց տարփանքը կրզգաս
հեռուներեն, հեռուներե՛ն… :
Ու կը լրսեմ վարերեն թևճակներու նրվագն ալ,
ջուրերուն վրա թրրթրռուն,
ու կը լրսեմ ծաղիկներուն ալ երգը
աղաղակ մը սիրածուփ՝
սահած ծոցեն դաշտերուն՝
ուր ցաները կը վետվետին սիրատարփ,
Ուր երկինքն ալ կը քնանա
կապույտներու խորհուրդին մեջ երազելով
վաղորդայններն երջանիկ: